Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«28» _____ 2022թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Ավանդական բժշկության համալսարանի /այսուհետ՝ ԱԲՀ/ գիտական խորհրդի /այսուհետ՝ Խորհուրդ/ կազմի ձևավորման և գործունեության, նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ընդունման ընթացակարգերը:

1.2. Գիտական խորհրդի գործունեության հիմքում ընկած են ՀՀ օրենսդրությունը, Համալսարանի կանոնադրությունը, սույն կանոնակարգը և կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր:

II.ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Գիտական խորհուրդը կոլեգիալ կառավարման մարմին է, որը քննարկում և սահմանված կարգով ընդունում է որոշումներ ԱԲՀ-ի ուսումնամեթոդական, գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման, համակարգման վերաբերյալ:

2.2. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը հինգ տարի է:

2.3. Գիտական խորհուրդը՝

- հաստատում է իր կանոնադրությունը,
- ռեկտորի ներկայացմամբ հաստատում է համալսարանի ստորաբաժանումների կանոնադրությունները, կանոնակարգերը, ներհամալսարանային այլ փաստաթղթեր,
- քննարկում և հաստատում է ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները (սահմանված ձևաչափին համապատասխան),
- լուծում է ուսումնամեթոդական, գիտահետազոտական, ինչպես նաև համալսարանի այլ ստորաբաժանումների գործունեության կազմակերպման հարցերը,
- հաստատում է մասնագիտությունների կրթական ծրագրերը,

- քննարկում է համալսարանի գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ համալսարանում կատարվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ,
- հաստատում է գիտահետազոտական թեմաներ և նշանակում գիտական ղեկավարներ,
- սահմանված կարգով միջնորդում է Բարձրագույն որակավորման հանձնաժողովին դոցենտի և պրոֆեսորի կոչումներ շնորհելու համար,
- ըստ անհրաժեշտության ստեղծում է մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը և աշխատակարգը սահմանվում է գիտական խորհրդի կողմից,
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանոնակարգից բխող այլ լիազորություններ:

III. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

3.1. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը առավելագույնը 25-ն է, որի առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորը, գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար), գլխավոր հաշվապահը, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչը, ֆակուլտետների, ամբիոնների ղեկավարները, արտաքին կապերի բաժնի ղեկավարը, ինչպես նաև ռեկտորի նշանակմամբ՝ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և ընտրովի անդամներ՝ գիտական խորհրդի կանոնակարգին համապատասխան:

3.2. Գիտական խորհրդի կազմում ընտրովի անդամներից կարող է լինել նաև առնվազն մեկ ոչ ԱԲՀ-ի աշխատող (արտաքին շահակից):

3.3. Գիտական խորհրդի անդամների 25 տոկոսը ուսանողներ են, որոնց առաջադրում է ուսանողական խորհրդի նախագահը՝ առաջնորդվելով ՈւԽ կանոնադրությամբ:

3.4 Գիտական խորհրդի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով:

IV. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Գիտական խորհուրդն իր գործառույթներն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:

4.2. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են ռեկտորը և գիտական քարտուղարը:

4.3 Գիտական քարտուղարը գիտական խորհրդի նիստ հրավիրելու և նիստի օրակարգի մասին առնվազն հինգ օր առաջ գրավոր ծանուցում է գիտական խորհրդի բոլոր անդամներին:

4.4. Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը գիտական խորհրդի անդամներին ուղղվում է առնվազն հինգ օր առաջ:

4.5. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր անդամների 2/3-ի մասնակցության դեպքում:

4.6. Գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը: Քվորում չապահովելու դեպքում՝ նիստը հետաձգում է:

4.7. Գիտական խորհրդի նախագահը, բացելով գիտական խորհրդի նիստը, տեղեկատվություն է տրամադրում քվորումի առկայության վերաբերյալ և քվեարկության է դնում նիստի օրակարգը:

4.8. Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել օրակարգում ընդգրկել այլ հարցեր:

4.9. Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, զեկույցների և ելույթների տևողությունը որոշում է գիտական խորհրդի նախագահը:

V. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Գիտական խորհրդում որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

5.2. Գիտական կոչումների ներկայացման քվեարկությունը կատարվում է փակ, գաղտնի քվեարկությամբ:

5.3. Փակ, գաղտնի քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները պատրաստում է գիտական քարտուղարը:

5.4. Քվեաթերթիկում նշվում է գիտական խորհրդի նիստի անցկացման ամսաթիվը, հերթական համարը, քվեարկության դրվող հարցի բովանդակությունը, քվեարկության հնարավոր տարբերակները՝ «կողմ» և «դեմ»:

5.5. Քվեարկությունից առաջ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով:

5.6. Հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատում է գիտական խորհուրդը:

5.7. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկություններ, պարզաբանում քվեարկության կարգը, ապահովում է քվեարկության կարգի պահպանումը:

5.8. Քվեաթերթիկը վավեր է, եթե դրանում նշված է միայն մեկ տարբերակ:

5.9. Հաշվիչ հանձնաժողովի անդամներն առանձին սենյակում բացում են քվեատուփը և իրականացնում են քվեարկության արդյունքների հաշվառում:

5.10. Հաշվիչ հանձնաժողովի անդամները կազմում են արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ և այն ներկայացնում գիտական խորհրդի հաստատմանը:

VI. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը կազմում է գիտական քարտուղարը, գիտական խորհրդի նիստն ավարտելուց եռօրյա ժամկետում:

6.2. Արձանագրությունը ստորագրում են գիտական խորհրդի նախագահը և գիտական քարտուղարը:

6.3. Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ամսաթիվը, նախագահը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:

VII.ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

7.1. Գիտական խորհրդի որոշումները կիրարկվում են ռեկտորի հրամաններով:

7.2. Ռեկտորն իրավասու է կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում նրա լիազորություններից, հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ԱԲՀ կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին իրավական այլ ակտերին:

7.3. Գիտական խորհրդի այն որոշումները, որոնք ռեկտորի կողմից կասեցվել են ընդունման ընթացքում ընթացակարգային խախտումներ թույլ տրվելու պատճառով, դրվում են վերաքննարկման և վերաքվեարկության գիտական խորհրդի նույն կամ այլ նիստում:

7.4. Գիտական խորհրդի որոշումների կրկնօրինակները տրամադրվում են Խորհրդի անդամներին:

VIII. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

8.1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

8.2. Սույն կանոնարգում փոփոխություններ կարող են կատարել Խորհրդի որոշմամբ: